

Դավիթ Լոբյանը եւ Գաբրիել Գյոզայանը այցելեցին Թալինի տարածաշրջան

27.04.2017

ՏԿՁ նախարար Դավիթ Լոբյանը եւ Արագածոտնի մարզպետ Գաբրիել Գյոզայանը ապրիլի 26-ին այցելեցին Թալինի տարածաշրջան: Նրանք եղան Արտենի եւ Արագածավան համայնքներում եւ հանդիպումներ ունեցան համայնքների, դպրոցների, մանկապարտեզների, բուժհաստատությունների ղեկավարների հետ: Զննարկվեցին համայնքներում առկա հիմնախնդիրներին վերաբերող հարցեր, նշվեցին դրանց լուծման հետ կապված հնարավորություններն ու առաջիկա անելիքները:

Նախարարին եւ մարզի ղեկավարին իրենց հարցադրումներն ուղղեցին համայնքների բնակիչները: Դրանք առավելապես վերաբերում էին ոռոգման եւ խմելու ջրի, բնական գազի մատակարարմանը, ճանապարհների բարեկարգմանը, գյուղատնտեսական մթերքների իրացմանը, աղբահանության իրականացմանը եւ համայնային նշանակության այլ խնդիրների:

Բնակիչները տեղեկացան, որ ինչպես իրենց մտահոգող այս հիմնախնդիրները, այնպես էլ այլ նախագծեր ներգրավված են համայնքների զարգացման ծրագրերում, որտեղ հստակեցված են դրան լուծման հետ կապված ողջ գործընթացները: